

ՀՏԴ 32/328

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ-ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ
ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱԳԱՅԻ ՏԵՍԼԱԿԱՆՆԵՐԻ
ՈՒՐՎԱԳԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ՄԱԳՂԱ ԱՐՍԵՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Հոդվածում քննարկվել են «քաղաքական մշակույթ» և «ինստիտուտներ» կատեգորիաների միջև փոխազդեցության կենսունակությունն ապագային միտված ռազմավարական տեսլականների մշակման տեսանկյունից: Այս առումով հեղինակը հոդվածում քննարկում է մի կողմից՝ ապագագիտության հնարավոր, հավանական և նորմատիվային, և մյուս կողմից՝ անհատական և կոլեկտիվ մակարդակներում «ցանկալի ապագայի» ձևաչափերը՝ ուսումնասիրելով դրանց փոխհարաբերակցությունն անցումային գործընթացների մշակութային և ինստիտուցիոնալ փոխակերպումների հետազոծի համատեքստում:

Բանալի բառեր. քաղաքական մշակույթ, սահմանադրականացում, ինստիտուտներ, ապագա, անցումային գործընթացներ, խելացի ուժ:

Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանության, և մասնավորապես՝ հանրային քաղաքականության որակի կառավարման համատեքստում քաղաքական մշակույթ-ինստիտուտներ փոխներգործության ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է սոցիալական փոխակերպումների բազմաշերտությամբ, ինչպես նաև «անցյալ-ներկա-ապագա» եռաչափության մեջ իրողությունների գիտութենահեն վերլուծության և ռազմավարական տեսլականների (strategic vision) մշակման հրամայականով:

Վերջին մեկ տարում տեղի ունեցած իրադարձությունները՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից մարտի 11-ին հայտարարված կորոնավիրուսի (COVID-19) համաշխարհային համաճարակը, Արցախյան 44-օրյա պատերազմը և հետպատերազմյան իրադարձությունները ժամանակի և տարածության մեջ ցույց տվեցին, որ կարող են դառնալ ճակատագրական թեստավորում ոչ միայն մեկ անձի հաշվարկով, այլև՝ ազգի, ժողովրդի, հասարակության և պետության «իմունային համակարգի» կենսունակության գնահատման տեսանկյունից:

Համաշխարհային համաճարակը և ոչ միայն, առհասարակ, ցանկացած ճգնաժամային իրավիճակ, ի հայտ է բերում սոցիալ-քաղաքական համակարգի բոլոր խոցերը և արտացոլում է **անհատական (individual)**,

հոգեբանական, մշակութային և ինստիտուցիոնալ զարգացման ստատուս-քվոն՝ պայմանավորելով պետական կառավարման մակարդակով ճգնաժամի շուտափույթ հաղթահարման, դրանից բխող հետևանքների իմացաբանական, կանխատեսման և կառավարման կարողությունը:

Հասարակական մակարդակում սոցիալականացման և վերասոցիալականացման գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հոգեբանական տեսանկյունից քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը, սոցիալ-տնտեսական մոբիլությունը, ինչպես նաև հակազդման մեթոդաբանությունը ժամանակի մարտահրավերներին շատ հաճախ ունեն հուզականության բավական մեծ բաղադրիչ: Վերջինս կասկածի տակ է դնում ոչ միայն անցյալի և ներկայի միջև կապի հիմնավորվածությունը, այլև ապագաբանական ցնծակաթվածի (ֆուտուրոլոկ) է հասցնում անվտանգության մասին մեր ընկալումները՝ ուժգնացնելով նախատիպային վարքային ձևաչափերի վերարտադրությունը:

Սա հանգեցնում է մշակութային մակարդակում հասարակության քաղաքական սոցիալականացման ոչ թե համաչափ և պլյուրալիստական, այլ՝ բախումնային և հեգեմոնիստական ձևաչափերի զարգացմանը [1]: Դրանք ուղեկցվում են սոցիալ-տնտեսական կայունության ցածր մակարդակով, ինչպես նաև սոցիալական խմբերի բևեռացմամբ՝ հասարակության մեջ ձևավորելով տարբեր արժեքներ և իդեալներ կրող գաղափարական և հակոտնյա խմբավորումներ, որոնց գոյությունն էապես դժվարացնում է սոցիումի ներսում համակեցության ապահովումը:

«Մշակույթ» և «ինստիտուտներ» կատեգորիաների միջև գոյություն ունեցող հակասությունները, ինչպես նաև դրանց դերի, նշանակության և մեկը մյուսի նկատմամբ գերակայության շուրջ իրարամերժ կարծիքներն առաջ են բերել թյուրըմբռնում, որ ինստիտուտները կարող են ապահովել կառավարման որակ արտաձին գործոնների փոխառե-լիության և գործնական կիրառման պայմաններում: Սակայն, հարկ է նկատել, որ արտաձին գործոններն անխուսափելիորեն ենթարկվում են ձևախեղման ներծին գործոնների հետ փոխազդեցության արդյունքում: Հետևաբար, ինստիտուտների գործունեության ձևաչափերն ունեն օնտոհոգեբանական (ontopsychology) և մշակութային ծագումնաբանություն, և դրսևորում են իրենց գործառական արդյունավետությունը՝ ելնելով արտաձին գործոնների հետ հնարավոր ներդաշնակեցումից:

Անհատական, հոգեբանական, մշակութային և ինստիտուցիոնալ մակարդակների միջև փոխազդեցությունը նեոքաղաքական գործընթացների հոլովույթում պետք է ենթադրի հանրային քաղաքականության և արժեշահային համակարգի արդիականացում ապագագիտության հետևյալ երեք ուղղություններով [2, էջ 284-289]՝ 1) ի՞նչ կարող է պատահել (**հնարավոր ապագա**), 2) ի՞նչ է հավանական, որ կպատահի (**հավանական**

ապագա), 3) ի՞նչ ենք մենք ցանկանում, որ պատահի (նորմատիվային կամ հետահայաց վերլուծություններով հիմնված ապագա):

Առաջին դեպքում քաղաքական զարգացման գործընթացի և սոցիետալ փոփոխությունների կանխատեսումը հիմնվում է իրողությունների հաշվարկման և վերլուծության վրա (երբեմն կոչվում է նաև «այլընտրանքային ապագա»):

Երկրորդ դեպքում ապագան կանխատեսվում է՝ ելնելով բնության պաշարներից և հասարակության ներուժից: Ապագայի այդ տեսակը հավանական է համարվում, եթե քաղաքական ծրագրեր մշակողները սեփական շահերի հաստատման նկատառումներով չեն արագացնում քաղաքական գործընթացները:

Երրորդ դեպքում ապագայի կանխատեսումները համապատասխանում են վերլուծաբանների ապագա պահանջներին, արժեքներին և հնարավորություններին, ինչպես նաև ցանկալի ապագայի վերաբերյալ մոտեցումներին: Նորմատիվային ապագայի կանխատեսումը նեղացնում է հնարավոր և հավանական ապագայի շրջանակները և պայմանավորված է որոշակի նպատակների ու ձգտումների իրականացմամբ: Այս առումով տարբերակվում են «դեդատոմսային» և նկարագրողական մեթոդները: Առաջինի դեպքում հայեցակարգերի և ծրագրերի միջոցով փորձ է արվում հստակեցնել հասարակության արժեշահային համակարգը ցանկալի ապագայի գծագրման համատեքստում: Նկարագրողական մեթոդի պարագայում ներկայացվում է, թե օբյեկտիվորեն ինչպիսի ապագա կարող է ակնկալվել: Թեև ապագայի որակական ուսումնասիրության մոտեցումների մեծամասնությունը հիմնվում է սուբյեկտիվ դատողությունների հիման վրա, այնուամենայնիվ, ապագան տեսնելու, կանխատեսելու և հիշելու համար վերլուծաբանների և ապագաբանների կողմից փորձ է արվում ներդաշնակեցնել սոցիետալ մակարդակում անցյալի ինտեգրման, ներկայի գիտակցման և ապագայի հնարավոր զարգացման սցենարների մշակման գործընթացները:

Վերոշարադրյալ հարցադրումներին 1) ի՞նչ կարող է պատահել, 2) ի՞նչ է հավանական, որ կպատահի, 3) ի՞նչ ենք մենք ցանկանում, որ պատահի) պատասխանելու համար անհրաժեշտ է սոցիետալ մակարդակում զուգամիտել և ներդաշնակեցնել անցյալի ինտեգրման, ներկայի գիտակցման և ապագայի հնարավոր զարգացման սցենարների մշակման գործընթացները:

Ապագայի վերոնշյալ ձևաչափերը «մաքուր ձևով» չեն գործառում և ունեն մեկ ընդհանրություն. դրանք ձևավորվում են ներքաղաքական և մետամոդեռն ժամանակային տարածությունում: Մետամոդեռնիզմը ենթադր-

րում է բարդ, բազմաշերտ և տարաբնույթ սկզբունքների հենքով ձևավորված համակարգ, որը գլոբալ և լոկալ առումով մարտահրավերներին պատասխանելու նպատակադրմամբ վերադառնում է պատմական հիշողությանը և ոգեղենականությանը՝ հիմնավորելով «անցյալ-ներկա-ապագա» ժամանակային տիրույթում ազգային, քաղաքական և քաղաքացիական ինքնությունների բնականոն զարգացման անհրաժեշտությունը: Մ. Մարգարյանի դիտարկմամբ՝ «այն չի ենթադրում լոկ ինքնամերժում, այլ ստեղծում է հնարավորություն՝ սեփական տեսակը դիտել սինուսոիդային տատանումների համատեքստում՝ շեշտադրելով «պարտության գնահատման», ներկայի մասին ընկալումների ռացիոնալացման և որպես «փորձիսխալի» կառավարման հարացույցի մերժման անհրաժեշտություն» [2]:

Անկախությունից ի վեր ՀՀ քաղաքական զարգացման ճգնաժամերի (ինքնության, բաշխման, մասնակցության, ներթափանցման, օրինականության) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անհատական և սոցիետալ մակարդակներում ապագայի կանխատեսման համար անհրաժեշտ կարողության ձևավորումը փոխարինվել է «իռացիոնալ կամ ցանկալի ապագայի» ձևաչափի ուրվագծմամբ: Այն ենթադրում է անհատական և կոլեկտիվ մակարդակներում իրավիճակային լուծումների կիրարկում: Դրանք արտացոլում են հասարակության հուզականության, վախերի, չհաղթահարված բարդությունների և տվյալ ժամանակի ու տարածության մեջ նախատիպային ոչ կենսունակ վարքային ձևաչափերը՝ առավելապես արդիականացնելով Ա. Մասլոուի բուրգի ամենաստորին օղակը՝ անհատի մարդաբանական և կենսաբանական պահանջմունքները:

Այս համատեքստում արդիական է քննարկել քաղաքական մշակութային ստիտուտներ փոխներգործությունն անցումային գործընթացների տեսանկյունից:

Արդի քաղաքական գիտության մեջ *ինստիտուցիոնալ փոխակերպումների, քաղաքական և սահմանադրական մշակութային փոխազդեցության շրջանակներում* Ու. Պաուելի [3, pp. 183–203] և Ռ. Ջեփերսոնի [4, pp. 143–163], Մ. Լևինի [5, pp. 117–133], Ա. Գրիֆի և Դ. Լայթինի [6, pp. 633–652.], Ջ. Մահոնեի [7, pp. 507–548], Կ. Թելենի [8, pp. 471–498] կողմից տարբերակվում են *սոցիոլոգիական, ռացիոնալ ընտրության և պայմանական մոտեցումները*: Դրանք ինստիտուտների ձևավորման և զարգացման բարեշրջային գործընթացում շեշտադրում են ոչ թե ակնթարթային կերպափոխումը, այլ՝ շարունակականությունը: Այն ենթադրում է ներծին և արտածին գործոնների համարժեքության, տարբերակման, ինչպես նաև ինստիտուցիոնալ «գենեզիսի» վերլուծության և քաղաքականության դերակատարների ներուժի որոշակիացման անհրաժեշտություն:

Հետևյալում իստական երկրների անցումային գործընթացների ուսումնասիրությունը վկայում է, որ ինստիտուցիոնալ փոխակերպումները տեղի

են ունեցել արտածին գործոնները (զծային ազատականացումը որպես ունիվերսալ բաղադրատոմս, ժողովրդավարացման արևմտյան ձևաչափերը, սահմանադրականացման մեխանիկացումը, արժեքային հեղափոխությունները և այլն)՝ որպես համակարգի ներածին և միևնույն ժամանակ «կվազի» չափորոշիչներ համարելու հետևանքով:

Վերոնշյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ և՛ քաղաքական ընտրանու իշխանության իրականացման, և՛ փորձագիտական ու վերլուծական հարթության համատեքստում բավարար ուշադրություն չի հատկացվել, և գուցե նաև նաև անտեսվել են քաղաքական ինստիտուտների ձևավորման մշակութային, ինստիտուցիոնալացման և սահմանադրականացման առանձնահատկությունները:

Քաղաքական համակարգի ներծին և արտածին գործոնների մեխանիկական փոխազդեցության վառ օրինակ է 1990-ական թվականներին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, ինչպես նաև նախկին Խորհրդային Միության անկախացած երկրներում կառավարման ձևաչափերի տեղայնացման հիմնախնդիրները:

Նախքան ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումը, հետկոմունիստական երկրներից *Հայաստանը*, *Լիտվան*, *Մոլդովան* սահմանադրությամբ ամրագրեցին կիսանախագահական կառավարման՝ «պրեմիեր-նախագահական» ձևաչափը, *Ռուսաստանը*, *Բելառուսը*, *Ուկրաինան*, *Ղազախստանը* և *Ղրղզստանն* ինստիտուցիոնալացրին նախագահական-խորհրդարանական ձևաչափը, իսկ *Ադրբեջանը*, *Տաջիկստանը*, *Թուրքմենստանը*, *Ուզբեկստանը* և *Վրաստանը* նախապատվություն տվեցին նախագահական կառավարման ձևաչափին: Վերոնշյալ երկրներից Մոլդովան (2000 թ. 2016 թ. ՍԴ որոշումը [8]), Ուկրաինան (2004 թ., 2010 թ., 2014 թ.), Վրաստանը (2004 թ., 2010 թ., 2017 թ.), Հայաստանը (2005 թ., 2015 թ.) և Ղրղզստանը (2007 թ., 2010 թ., 2016 թ.) առավելապես ներքաղաքական զարգացումների արդյունքում իրականացրել են սահմանադրական փոփոխություններ՝ նպատակ հետապնդելով կրճատել նախագահի լիազորությունները և կենսագործել իշխանության ճյուղերի փոխզույգման և հակակշռման կառուցակարգերը:

Օ. Հարիտոնովայի դիտարկմամբ՝ հետկոմունիստական երկրների սահմանադրական փոփոխությունները և արդյունքում անցումը կառավարման այս կամ այն ձևաչափից մյուսին, փաստում էին իրավաքաղաքական համակարգում այդ սահմանադրությունների ոչ թե բովանդակային, այլ՝ «դեկորատիվ» նշանակության և դերի մասին [9]: Ի հավելում վերոնշյալի՝ նշենք, որ ինստիտուցիոնալ զարգացման մեխանիկացումը սահմանադրությունից սահմանադրականացման, այն է՝ սահմանադրական, խորհրդարանական և քաղաքական մշակույթների միջև կապի բացակայության արդյունք էր:

Ստորև դիտարկենք իրավաքաղաքական փոխակերպումների ինստիտուցիոնալացման և սահմանադրականացման հարթությունները:

Ինստիտուցիոնալ փոխակերպումների համատեքստում արդիական նշանակություն ունեն քաղաքագետներ Ջ. Մահոնեյի և Կ. Թելեյի կողմից մշակված ինստիտուցիոնալ կերպափոխման ձևաչափերի տարբերակումները (*փոխարինում (displacement)*, *շերտավորում (layering)*, *շեղում (drift)*, *վերակառուցում (conversion)*) [10]:

«Փոխարինում» (Displacement) ձևաչափի դեպքում քաղաքական խաղի հին կանոնները և գործող ինստիտուցիալ կարգավորումները փոխարինվում են նորերով (օրինակ՝ սահմանադրական փոփոխությունները, դրանց միջոցով կառավարման մի ձևաչափից անցումը մյուսին և այլն): Ռեֆորմների իրականացման այս ձևաչափը բացատրվում է հետտեղափոխական տրամաբանությամբ, որը ենթադրում է հաղթանակի օրինականացում նախկինում գործող ինստիտուտների փոխարինմամբ: Հեղափոխականները սահմանում են քաղաքական խաղի նոր կանոններ՝ օգտվելով քաղաքականության մյուս դերակատարների այլևս «թույլ» կարգավիճակից և համոզված լինելով, որ նրանց ոչինչ խանգարել չի կարող: Ինստիտուցիոնալ կերպափոխման այս ձևաչափը կիրարկվել է հետխորհրդային տարածքում տեղի ունեցած գրեթե բոլոր «գունավոր» հեղափոխությունների արդյունքում:

«Շերտավորում»-ը (Layering) հանդիսանում է միաժամանակ և՛ հին, և՛ նոր ինստիտուցիոնալ կարգավորումների արդյունք: Ի տարբերություն «փոխարինման» ձևաչափի՝ «շերտավորման» ձևաչափը չի ենթադրում ամբողջությամբ նոր ինստիտուտների ներդրում: Այն ենթադրում է փոփոխություններ, արդիականացում, լրացումներ և այլն: Հետկոմունիստական տարածքում ինստիտուցիոնալ փոխակերպումների «շերտավորման» ձևաչափը կիրառվել է Կենտրոնական Ասիայի երկրներից Ղազախստանում («Ղազախստանի Հանրապետության առաջին նախագահի մասին ազգի առաջնորդը» Սահմանադրական օրենքը [11]), Տաջիկիստանում (2016 թ. սահմանադրական փոփոխություններ [12]) և Թուրքմենստանում (2016 թ. սահմանադրական փոփոխություններ [13])՝ նախագահների պաշտոնավարման ժամկետները երկարացնելու նպատակով: Նմանօրինակ զարգացումներ տեղի են ունեցել նաև Արևելյան Եվրոպայի երկրներում (Ադրբեյջան (2016 թ. Սահմանադրական փոփոխություններ [14]), Բելառուս (2004 թ. հանրապետական հանրաքվե [15]) հանրաքվեների միջոցով՝ նպատակ ունենալով չեղարկել նախագահի պաշտոնավարման սահմանափակումները:

«Շեղում»-ը (Drift) տեղի է ունենում այն ժամանակ, երբ հին ինստիտուտներն արտաքին գործոնների ազդեցության ներքո փոխակերպվում

են միայն ֆորմալ առումով: Այս համատեքստում որպես օրինակներ կարող ենք դիտարկել քաղաքական ընտրանիների կողմից հասարակության արդիականացման և վերասոցիալականացման հատվածային բնույթը, ինչպես նաև հանրային ֆինանսների ոչ հասցեական և անարդյունավետ կառավարումը տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրների հաղթահարման տեսանկյունից:

«Վերակառուցում»-ը (Conversion) ենթադրում է գործող քաղաքական խաղի կանոնների և ինստիտուտների վերագործարկում դրանց դերի և նշանակության նոր մեկնաբանությունների, ինչպես նաև ներդրված նոր գործառույթների և նպատակների շրջանակներում: Այս առումով «conversion»-ի կիրարկման օրինակ կարող է դիտարկվել ընտրությունների կամ հեղաշրջման/հեղափոխական զարգացումների արդյունքում իշխանության եկած նոր քաղաքական ընտրանիների կողմից կառավարության կառուցվածքային փոփոխությունների իրականացումը: Հարկ է նշել, որ այդ փոփոխությունները կարող են չարտահայտել իշխանության եկած քաղաքական ուժերի նախկին ընդդիմադիր դիրքորոշումները, հատկապես հետհեղափոխական ժամանակային տիրույթում:

Վերոնշյալ ինստիտուցիոնալ փոխակերպումների ձևաչափերի ուսումնասիրությունը և դրանց համադրումը հետխորհրդային երկրներում տեղի ունեցող զարգացումների հետ, ցույց են տալիս, որ նշյալ ձևաչափերը հիմնականում գործարկվել են «վերևից»՝ բացառելով ինստիտուտների և քաղաքականության այլ դերակատարների մասնակցությունը ժողովրդավարական անցման գործընթացներում: Բացի այդ, հետխորհրդային ինստիտուտների փոխակերպման ձևաչափերը վկայում են համաձայնության և համագործակցության, փոխզիջման և հանդուրժողականության հաստատման ճանապարհին քաղաքականության դերակատարների կամքի և/կամ վախի առկայության մասին:

Սահմանադրական փոխակերպումների համակողմանի ուսումնասիրության տեսանկյունից նպատակահարմար ենք համարում քննարկել քաղաքական գործընթացների գնահատման քաղաքական սահմանադրագիտության մոտեցումը: Այն բացառում է միայն իրավական տեսանկյունից Սահմանադրության ուսումնասիրությունը՝ մատնացույց անելով իրավական մոտեցման թերի լինելը քաղաքական գործընթացների, պետության սահմանադրաիրավական և քաղաքական կարգի մասին հասարակության ընկալումների ու պատկերացումների, ինչպես նաև քաղաքացիական մասնակցության օբյեկտիվ գնահատման առումով: Խնդիրն այն է, որ անձի քաղաքական իրավունքների և ազատությունների իրականացման խոսույթի իրավական չափորոշիչը նվազեցնում է քաղաքական բանավեճերի կենսունակությունը հասարակական-քաղաքական կյանքում: Այդօրինակ

մոտեցումը կարելի է որակել որպես անվստահություն հանրության սոցիալ-քաղաքական ներուժի նկատմամբ: Այն երկրներում, որտեղ անձի իրավունքների և ազատությունների խոսույթը կրում է ապաքաղաքական բնույթ, քաղաքացիները մարգինալացվում են քաղաքական գործընթացներից՝ չկարողանալով քաղաքական գնահատականներ տալ այնպիսի հիմնարար հարցերի, ինչպիսիք են օրինակ՝ իրավունքի, ազատության, և պատասխանատվության կառուցվածքը, և դրանց տարանջատումը: Այս երեք հասկացությունների գիտակցումը և դրանց իրականացումը նախորոշում են քաղաքացու սոցիալ-քաղաքական վարքի ձևաչափը, որն իր արտացոլումն է գտնում խորհրդարանական քաղաքական մշակույթում:

Քաղաքական և իրավագիտական խոսույթի շրջանակներում արդիական նշանակություն ունի այն տեսակետը, որ Սահմանադրությունը «պարզև» է քաղաքական պայքարի ընթացքում հաղթած քաղաքական ուժին [16]: Այս տեսանկյունից կարող ենք ենթադրել, որ քաղաքականության դերակատարները ճանաչում են Սահմանադրության «ուժ»-ն այնքան ժամանակ, քանի դեռ այն պաշտպանում է իրենց շահերը և իշխանությունը: Այն դեպքում, երբ դրանք վտանգի ենթարկվեն կամ էսպես սահմանափակվեն ի հաշիվ Սահմանադրությամբ ամրագրված իրավական նորմերի և դրույթների, քաղաքական ուժերը կառաջադրեն գործող Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը: Վերագրյալից կարող ենք ենթադրել, որ պետության ներսում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական փոխակերպումներն անխուսափելիորեն հանգեցնում են Սահմանադրության փոփոխությանն այն հետհեղափոխական հասարակություններում, որտեղ ընդդիմությունը փորձում է ամրապնդել իր հաղթանակն ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացման միջոցով: Ավելին, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սահմանադրական կայունությունը մեծապես պայմանավորված է քաղաքական կայունությամբ, որի խարխուլումը հեղափոխությունների կամ ռազմական հեղաշրջումների արդյունքում ունի նշանակալի ազդեցություն Սահմանադրության «կենսունակության» հարցում:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով վերագրյալ՝ մենք ամենևին չենք կարող փաստել սահմանադրականության վրա քաղաքականության միակողմանի ազդեցության մասին, քանի որ Սահմանադրությունն իր հերթին սահմանում է այն իրավական նորմերը, որոնց շրջանակում պետք է գործունեություն ծավալեն քաղաքական ինստիտուտները:

Մյուս կողմից, շեշտադրելով Սահմանադրության՝ որպես բարձրագույն իրավական ակտի և քաղաքականության փոխազդեցության կարևորությունը երկրում սահմանադրականության և քաղաքական մշակույթի ժողովրդավարացման տեսանկյունից, հարկ ենք համարում նշել, որ Սահ-

մանադրության գործողությունը չպետք է պայմանավորված լինի քաղաքականության դերակատարների շահերով: Այս համատեքստում հարկ է նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ քաղաքական ընտրանին օգտագործում է Սահմանադրությունն իր քաղաքական իշխանությունն ամրապնդելու համար, արդյունքում ականատես ենք լինում հետևյալ պարադոքսի արդիականացմանը, այն է՝ «Սահմանադրությունն առանց սահմանադրականության»: Վերջինս, մեր կարծիքով, անընդունելի է սահմանադրական կայունության և կայուն ժողովրդավարությունների երաշխավորման տեսանկյունից:

Հետևաբար, սահմանադրական կայունությունն առաջին հերթին պայմանավորված է հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթների զարգացման մակարդակով:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ ակնհայտ է, որ ինստիտուցիոնալ փոխակերպման ձևաչափերի ուսումնասիրության տեսանկյունից քաղաքական համակարգի կառուցվածքային գործոնները նախորոշում են ինստիտուտների և քաղաքականության դերակատարների վարքային ձևաչափերը, ինչպես նաև ապահովում են դրանց շարունակական վերարտադրումն այնքան ժամանակ, քանի դեռ վարքային ձևաչափերը չեն փոխակերպվում ներածին գործոնների արդիականացման արդյունքում:

Ժողովրդավարական անցման հիմնախնդիրների անտեսման պայմաններում հետխորհրդային երկրների ինստիտուցիոնալ մեխանիկացումը հանգեցրեց հանրային կյանքում պետական և քաղաքական ինստիտուտների դերի և նշանակության անկմանը՝ հիմք դնելով այդ ինստիտուտներում անձնավորման, կլիենտելիզմի և հովանավորչական հարաբերությունների ձևավորմանը և խորացմանը:

Այսպիսով, «քաղաքական մշակույթ» և «ինստիտուտներ» կատեգորիաների միջև փոխներգործության կենսունակությունն ապագայի ուղենշման և ռացիոնալացման տեսանկյունից ենթադրում է առաջին հերթին քաղաքական համակարգի *մշակութային ստատուս քվոյի ուրվագծում*¹ ելակետ ընդունելով անցյալի, ներկայի, ապագայի փոխպայմանավորվածությունը և մատնանշելով ինստիտուցիոնալ փոխակերպումների միտումներն ու հիմնախնդիրները: Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական և քաղաքական մշակույթների ժողովրդավարացման և փոխներդաշնակեցման տեսանկյունից ուրվագծվում են հետևյալ չափումները՝ 1) *հասարակական-քաղաքական կյանքում խորհրդարանի դերի և նշանակության արժևորումն ապագագիտության հնարավոր, հավանական և նորմատիվային ձևաչափերի տեսանկյունից*, 2) *«Սահմանադրական փոփոխությունների զարգացման էվոլյուցիայի և սահմանադրականության ապահովման տեսանկյունից անհատական և կոլեկտիվ մակարդակներում իրավաքաղաքական նորմերի ընկալման փոխակերպում*, 3) *քաղաքական կոալիցիաների ձևավորման համարեքստում «փորձի-սխալի» կառավարման*

հարացույցի մերժում անցումից համախմբում գործընթացն ավարտին հասցնելու համար, 3) կուսակցությունների կողմից իրականացվող քաղաքականության կենսունակությունը կենտրոն-ծայրամաս կապի ուժեղացման տեսանկյունից, 4) քաղաքացիական հասարակության վերակազմակերպում «խելացի ուժի» [17, էջ 67-75]՝ ապահովելու համար ներքաղաքական կայունություն և հեղափոխություն լինելով արդի միջազգային հարաբերությունների համակարգում պետության ինքնության արդիականացմանը:

Նշենք, որ վերոշարադրյալ չափումները գտնվում են շղթայական փոխազդեցության մեջ՝ պայմանավորելով մեկը մյուսի զարգացման ձևաչափը: Չափումներից որևէ մեկի անտեսումը կամ բացառումը քաղաքական համակարգի կայունության և դրա առջև ծառայած մարտահրավերներին դիմագրավելու տեսանկյունից իրավաքաղաքական համակարգի մշակութային ստատուս քվոյի «վիզուալիզացիան» և կանխատեսումը դարձնում են անորոշ և թերի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Малькевич А. А.**, Зарубежные концепции политической социализации. Общество. Среда. Развитие (Terra Humana) - 2 (19), 2011. <https://cyberleninka.ru/article/n/zarubezhnye-kontseptsii-politicheskoy-sotsializatsii/viewer> (Дата доступа: 14.09.2021)
2. **Մ. Մարգարյան**, Քաղաքական լիդերություն. Տեսություն և պրակտիկա.-Երևան, ՀՀ ՊԿԱ, էջ 284-289:
3. **Powell W.**, Expanding the Scope of Institutional Analysis. In The New Institutionalism in Organizational Analysis, ed. Walter W. Powell and Paul J. DiMaggio, Chicago: University of Chicago Press. 1991, pp. 183–203.
4. **Jepperson R.**, Institutions, Institutional Effects, and Institutionalism. In The New Institutionalism in Organizational Analysis, ed. Walter W. Powell and Paul J. DiMaggio, Chicago: University of Chicago Press. 1991, pp. 143–163.
5. **Levi M.**, Reconsiderations of Rational Choice in Comparative and Historical Analysis. In Comparative Politics: Rationality, Culture, and Structure, ed., Mark Irving Lichbach and Alan S. Zuckerman, 2nd ed. New York: Cambridge University Press. 2008, pp. 117-133.
6. **Greif A., Laitin D.**, A Theory of Endogenous Institutional Change. American Political Science Review 98 (4). 2004, pp 633–652.
7. **Mahoney J.**, Path Dependence in Historical Sociology. Theory and Society 29. 2000, pp. 507–548.
8. **Thelen K.**, Institutional Change in Advanced Political Economies. British Journal of Industrial Relations (47). 2009, pp 471–498.
9. **Харитонов О. Г.**, Цветные революции в контексте теорий демократизации. Полит. наука. 2014. №3. <https://cyberleninka.ru/article/n/>

[tsvetnye-revoljutsii-v-kontekste-teoriy-demokratizatsii](#) (Дата доступа: 19.10.2021).

10. **Mahoney J., Thelen K.**, Explaining Institutional Change: Ambiguity, Agency and Change. Cambridge University Press. 2010, pp. 17-24. https://assets.cambridge.org/97805211/34323/frontmatter/9780521134323_frontmatter.pdf (Assessed. 20.10.2021).

11. Конституционный закон «О Первом Президенте Республики Казахстан–Лидере Нации». https://www.akorda.kz/ru/official_documents/constitutional_laws/o-pervom-prezidente-respubliki-kazahstan-lidere-nacii (Дата доступа: 20.10.2021).

12. Президенту Таджикистана разрешили избираться неограниченное число раз. <https://www.rbc.ru/politics/22/01/2016/56a1d4cf9a7947522fc1348a> (Дата доступа: 20.10.2021).

13. В Туркменистане приняли новую конституцию. <https://www.gazeta.uz/ru/2016/09/16/turkmenistan/> (Дата доступа: 20.10.2021).

14. Внеочередные выборы президента Азербайджана пройдут 11 апреля. <http://www.cis.minsk.by/news/8821> (Дата доступа: 20.10.2021).

15. Указ Президента Республики Беларусь: 7 сентября 2004 г. N 431 г. Минск. <http://www.rec.gov.by/sites/default/files/pdf/Archive-Referenda-2004-Ukaz.pdf> (Дата доступа: 20.10.2021).

16. **A. Manasyan**, The Issues of Differentiation of Constitutional Policy from Ongoing Politics. Political Science Studies. 2019; 52, <http://www.studiapolitologiczne.pl/The-Issues-of-Differentiation-of-Constitutional-Policy-from-Ongoing-Politics,115426,0,2.html> (Assessed 20.10.2021).

17. **Մ. Արսենյան**, Սոցիալականացման և վերասոցիալականացման «փափուկ ուժը» ՀՀ խորհրդարանական կառավարման ձևի ժողովրդավարացման պայմաններում, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2019 № 2 (29), էջ 67-75:

ВЗАИМОДЕЙСТВИЕ ПОЛИТИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И ИНСТИТУТОВ В КОНТЕКСТЕ РАЗРАБОТКИ ВИДЕНИЙ БУДУЩЕГО

МАГДА АРСЕНЯН

Академия государственного управления Республики Армения

В статье обсуждается жизнеспособность взаимодействия категорий «политическая культура» и «институты» с точки зрения разработки стратегического видения будущего. В связи с этим в статье обсуждается с одной стороны возможные, вероятные и нормативные, а с другой - модели «желаемого будущего» на индивидуальном и коллективном уровнях, изучая их взаимную соотносительность в контексте траектории культурных и институциональных преобразований переходных процессов.

Ключевые слова: политическая культура, конституционализация, институты, будущее, переходные процессы, «разумная сила».

INTERACTION OF POLITICAL CULTURE AND INSTITUTIONS IN THE CONTEXT OF DEVELOPING FUTURE VISIONS

MAGDA ARSENYAN

Public Administration Academy of the Republic of Armenia

The article discusses the viability of the interaction of the categories "political culture" and "institutions" in terms of developing a strategic vision of the future. In this regard, the author discusses in the article, on the one hand, the possible, presumptive and normative models of future science, and on the other hand, "desired future" models at the individual and collective levels, studying their correlation in the context of cultural and institutional transformations.

Keywords: political culture, constitutionalization, institutions, future, transition processes, smart power.

*Ներկայացվել է խմբագրություն 18.10.2021
Երաշխավորվել է փրկագրության 29.10.2021*